
քանեօթներորդ
արեւածաղիկ


սմբուկը ըսաւ դդումին.
դուն դդո՛ւմ ես.


դդումը ըսաւ
պղպեղին.
ջուն կծո՛ւ ես.

պղպեղը ըսաւ
լոլիկին.





սմբուկը եւ դդումը,

պղպեղը եւ լոլիկը,

մտան

կաթսային մէջը։

սմբուկին փորը պարպեցի,
մէջը բրինձ լեցուցի.
կաթսային մէջ
լոլիկի ջուրով եփեցի.
ես անօթի, դուն անօթի,
սմբուկը ինծի թէ քեզի.

դդումին փորը պարպեցի,
մէջը բրինձ լեցուցի.
կաթսային մէջ,
սմբուկին հետ,
լոլիկի ջուրով եփեցի.
ես անօթի, դուն անօթի,
դդումը ինծի թէ քեզի.



պղպեղին փորը պարպեցի,
Տէղը բրինձ լեցուցի.
կաթսային տէղ,
սմբուկին հետ,
դդումին հետ,
Լոլիկի ջուրով եփեցի.
Եւ անոյշ, դո՛ւն անոյշ,
պղպեղը ինծի թէ ճեպի.

Լոլիկին փորը պարպեցի,
Տէղը բրինձ լեցուցի.
կաթսային տէղ,
սմբուկին հետ,
դդումին հետ,
պղպեղին հետ,
Լոլիկի ջուրով եփեցի.
Եւ անոյշ, դո՛ւն անոյշ,
Լոլիկը ինծի թէ ճեպի.



կաթսա՛յ, կաթսա՛յ, մէջդ ի՞նչ կայ.



